# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 մայիսի 2016 թվականի N47 Ա**

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՑ 8-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.22 կետերով և համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված պլան-ժամանակացույցի, **ո ր ո շ ու մ եմ**

1. 2016 թվականի հունիսի 7-ից 8-ը ՀՀ Սյունիքի մարզպետարանում կառավարման կետերի աշխատանքային խմբերի հետ անցկացնել առանձնացված շտաբային մարզումներ՝ <<Արծվանիկի պոչամբարի պատվարի մասնակի փլուզում>> թեմայով:

2. Առանձնացված շտաբային մարզումներում ընդգրկել՝

ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի ղեկավար կազմերը, մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, մարզի տարհանման հանձնաժողովը, ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, <<ԶՊՄԿ>> ՓԲԸ, Կապանի <<Բուստ>> ՓԲԸ, Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ, <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, <<ԱրմենՏել>> ՓԲԸ Հարավային տարածքային կենտրոնի Կապանի բաժանմունքը, ՀՀ ԱԻՆ <<Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն>> ՊՈԱԿ, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության Սյունիքի մարզային վարչության և ճանապարհային ոստիկանության համապատասխան ծառայությունները:

3. Առանձնացված շտաբային մարզումների շտաբի պետ նշանակել ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանին:

4. Հաստատել՝

1) առանձնացված շտաբային մարզումների ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N1 հավելվածի,

2) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N2 հավելվածի,

3) առանձնացված շտաբային մարզումների աշխատանքային խմբերի հերթափոխի ժամանակացույցը՝ համաձայն N3 հավելվածի,

4) առանձնացված շտաբային մարզումների մտահղացման բացատրագիրը, անցկացման և իրավիճակի զարգացման պլանները՝ համաձայն N4,5,6 հավելվածների:

5. Առանձնացված շտաբային մարզումների շտաբի պետ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ.Գրիգորյանին՝

1) ապահովել առանձնացված շտաբային մարզումների անցկացման փաստաթղթերի սահմանված ժամկետներում մշակումն ու մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն պլանի,

2) առանձնացված շտաբային մարզումների անցկացման պատրաստության մասին զեկուցել ս/թ հունիսի 6-ին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. մայիսի 26-ի
N47 Ա որոշման

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

| Հ/Հ | Ուսումնավարժության ընդգրկված մասնակիցները | Միջնորդներ | |
|---|---|---|---|
| | | պաշտոնը | ազգանուն, անուն |
| 1 | Սյունիք համայնքի ղեկավար կազմ, ԱԻ հանձնաժողով | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | Գրիգորյան Արսեն |
| 2 | Տարահանման հանձնաժողով | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ ՀԳՄ վարչության պետ | Ավետիսյան Սեյրան |
| 3 | Ուղևորափոխադրում-ներ իրականացնող Կապանի <<Բուստ>> ՓԲԸ | ՔՊ տրանսպորտի ծառայության պետ | Աղաբեկյան Սարիկ |
| 4 | Շինարարական աշխատանքներ իրականացնող Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ | ՔՊ ինժեներական ծառայության պետ | Ավետիսյան Ռազմիկ |
| 5 | <<ԱրմենՏել>> ՓԲԸ Հարավային տարածքային կենտրոնի Կապանի բաժանմունք<br><br><<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ | Պետրոսյան Մարատ |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն<br><br>Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 6-րդ սպայական վաշտի 2-րդ սպայական դասակ | ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ծառայության խմբի ավագ տեսուչ | Մինասյան Զաքար |

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. մայիսի 26-ի
N47-Ա որոշման

# Կ Ա Զ Մ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1 | Գրիգորյան Վաչե | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, շտաբի պետ |
| 2 | Գրիգորյան Արսեն | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ |
| 3 | Ավետիսյան Սեյրան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության պետ |
| 4 | Պետրոսյան Մարատ | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ |
| 5 | Զաքարյան Բագրատ | ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ |
| 6 | Հարությունյան Արթուր | ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ |
| 7 | Բադալյան Կիմ | ՀՀ ԱԻՆ <<Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն>> ՊՈԱԿ գործադիր տնօրեն |
| 8 | Մինասյան Զաքար | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ծառայության խմբի ավագ տեսուչ |

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. մայիսի 27-ի
N47 Ա որոշման

ՑԱՆԿ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՒՄ ՆՇՎՈՂ ԿԵՏԵՐԻ

Մարզպետարանի օպերատիվ հաշվարկներում նշվում են՝

1. Մարզպետարանի գործունեության ապահովման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբերը, նրանց կազմը, խնդիրները ու ազդարարման, հավաքի կազմավորման, կառավարման կետեր դուրս բերելու ժամկետները

(օրինակ՝ կառավարման կետի գործունեության ապահովման նպատակով ստեղծվում են հետևյալ աշխատանքային խմբերը)

**1. Տեղեկությունների հավաքման, վերլուծության և կառավարչական որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խումբ**

Առաջին հերթափոխ՝

1.Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Գայյա Կարապետյան ժ. 9:00-12:00
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Սեյրան Ավետիսյան ժ. 9:00-12:00
3.Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Ահդա Համբարձումյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Գրիշա Խաչատրյան ժ. 12:00-15:00
2. Մարգարիտա Զախարյան ժ. 12:00-15:00
3. Գայանե Դավթյան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Մուշեղ Կոստանդյան ժ. 15:00-18:00
2. Սառա Գրիգորյան ժ. 15:00-18:00
3. Մարատ Հարությունյան ժ. 15:00-18:00

**2.Պետական կառավարման մարմինների հետ իրականացվող աշխատանքների համակարգման խումբ**

Առաջին հերթափոխ՝

1.Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Մելանյա Հայրապետյան ժ. 9:00-12:00
2.Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Գրիգոր Թադևոսյան ժ. 9:00-12:00
3.Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Նարինե Գրիգորյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Աշոտ Ասրյան ժ. 12:00-15:00
2. Ռաֆիկ Ղազարյան ժ. 12:00-15:00

3. Վահրամ Արզումանյան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Էդուարդ Միրզոյան ժ. 15:00-18:00
2. Սուրիկ Վեզիրյան ժ. 15:00-18:00
3. Արտյոմ Փիրյան ժ. 15:00-18:00

**2□ Կապի և ազդարարման ապահովման խումբ**

Առաջին հերթափոխ՝

1. Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Սարիկ Աղաբեկյան ժ. 9:00-12:00
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Ռազմիկ Ավետիսյան ժ. 9:00-12:00
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Իվետա Հայրապետյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Արմինե Ծատրյան ժ. 12:00-15:00
2. Արփինե Հարությունյան ժ. 12:00-15:00
3. Իննա Բալայան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Հայկ Հարությունյան ժ. 15:00-18:00
2. Երջանիկ Սարգսյան ժ. 15:00-18:00
3. Ժորա Բաբայան ժ. 15:00-18:00

**1. Նյութատեխնիկական ապահովման խումբ**

Առաջին հերթափոխ՝

1. Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Արարատ Գրիգորյան ժ. 9:00-12:00
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Աշոտ Խաչատրյան ժ. 9:00-12:00
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Գայանե Սարգսյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Միհեր Հայրյան ժ. 12:00-15:00
2. Տյոմա Սարգսյան ժ. 12:00-15:00
3. Անուշ Աբրահամյան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Վովա Այվազյան ժ. 15:00-18:00
2. Նելլի Կարապետյան ժ. 15:00-18:00
3. Համլետ Ավետիսյան ժ. 15:00-18:00

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. մայիսի 26-ի
N47 Ա որոշման

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ

**Առանձնացված շտաբային ուսումնավարժության թեման՝** <<Արծվանիկի պոչամբարի պատվարի մասնակի փլուզում>>:

**Ուսումնավարժության նպատակները՝**

1. Ստուգել ՀՀ Սյունիքի մարզի ղեկավար մարմինների պատրաստականությունն Արծվանիկի պոչամբարի պատվարի հավանական փլուզման դեպքում:
2. Կատարելագործել ՀՀ Սյունիքի մարզի ղեկավար մարմինների ունակությունները ջրածածկման գոտում բնակչության տարհանման միջոցառումների և փրկարարական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

3□ Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումն աղետի առաջացման դեպքում:

4□ Ստուգել մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների փոխգործակցությունը և գործողությունները:

**Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝**

ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի ղեկավար կազմերը, մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, մարզի տարհանման հանձնաժողովը, ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, <<ԶՊՄԿ>> ՓԲԸ, Կապանի <<Բուստ>> ՓԲԸ, Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ, <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, <<ԱրմենՏել>> ՓԲԸ Հարավային տարածքային կենտրոնի Կապանի բաժանմունքը, ՀՀ ԱԻՆ <<Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն>> ՊՈԱԿ, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության Սյունիքի մարզային վարչության և ճանապարհային ոստիկանության համապատասխան ծառայությունները:

**Ուսումնավարժության անցկացման ժամկետը՝** 2016թ□հունիսի 7-ից 8-ը:
Տևողությունը աստղաբաշխական ժամանակով ժ. 09:30-ից –18:30-ը:
Օպերատիվ ժամանակով ժ. 09:00-ից մինչև ժ. 18:30 –ը 08□06□2016թ□

**Ուսումնավարժության անցկացման վայրը՝ ՀՀ** Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի վարչական շենք:

**Ելակետային տվյալներ՝**

ՀՀ Սյունիքի մարզը կազմավորվել է 1996 թվականին: Մարզի տարածքը կազմում է 4506 քառ.կմ. (Հայաստանի Հանրապետության տարածքի 15 %-ը): Մարզկենտրոնն է Կապան քաղաքը: Կապան քաղաքի միջով է անցնում Մ-2՝ Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Քաջարան-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհը: Արծվանիկի պոչամբարը Սյունիքի մարզում գտնվող Հայստանի ամենամեծ պոչամբարն է, որը զբաղեցնում է 350 հա-ից ավելի տարածքով մակերես□ տարողությունը կազմում է 160 մլն□խոր□մետր: Արծվանիկի պոչամբարը շահագործվում է <<Զանգեզուրի

պղնձամոլիբդենային կոմբինատ>> ՓԲԸ կողմից: Պոչամբարում կուտակվում են հանքավայրի շահագործման արդյունքնում առաջացած նյութեր: 2003թ. այս պոչամբարում կար ընդամենը 95 մլն□խոր□ մետր պոչանք□ այն համարվում էր աշխարհի ամենամեծ պոչամբարը: Ըստ նախագծի՝ պոչամբարը նախատեսված է 310 մլն□ խոր□ մետր պոչանքի համար: Այժմ Զանգեզուրի պղնձամոլիբդենայի կոմբինատից մեկ տարվա ընթացքում այստեղ է լցվում մոտ 14 մլն□ տոննա պոչանք՝ մոտ 40 մլն խոր□մետր ջրի հետ խառնված:

**Ստեղծված իրավիճակը՝**

Ս/թ հունիսի 7-ին, տեղական ժամանակով ժամը 08:50-ին Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում՝ Ահար քաղաքից 26 կմ դեպի արևմուտք տեղի է ունեցել 6.3 մագնիտուդով երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում ըստ Ռիխտերի սանդղակի կազմել է 7-8 բալ: Երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում է 8 կմ խորության վրա: Էպիկենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 38°48' և արևելյան երկայնության 46°75': Կան բազմաթիվ ավերածություններ և զոհեր: Չի գործում կապը և խափանված են հաղորդակցման ուղիները:

Երկրաշարժը Սյունիքի մարզում կազմել է 5-6 բալ: Ստորգետնյա ցնցումներից վնասվել է Արծվանիկի պոչամբարի պատվարը և առաջացել են ճեղքվածքներ, որոնք ժամ առ ժամ մեծանում են ապարախյուսի ուժեղ հոսքից, որի հետևանքով պատվարի ճեղքվածքներից դուրս է բերվում րոպեում 850մ$^3$ ծավալով ապարախյուս: Պոչամբարում կուտակված է մոտ 150 մլն□խոր□մետր ապարախյուս: Սկսվել է հորդառատ անձրև, որն ըստ ՀՀ ԱԻՆ <<Հիդրոօդերևութաբանական Մոնիտորինգի պետական ծառայություն>> ՊՈԱԿ Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայության կարող է տևել մոտ երկու օր, այդպիսով էլ ավելի բարդացնելով ստեղծված իրավիճակը: Արծվանիկի պոչամբարի անվտանգության աշխատակիցն ահազանգում է Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչին և հայտնում, որ տեղի ունեցած երկրաշարժից վնասվել է պոչամբարի պատվարը: Ապարախյուսը դուրս է հոսում մեծ արագությամբ: Խափանվել է դրենաժային կառույցների աշխատանքը, ինչի հետևանքով բարձրացել է դեպրեսիոն կորը պրիզմայի մարմնում, թուլացնելով պոչամբարի ընդհանուր կայունությունը: Ապարախյուսի հոսքը մոտեցել է Սյունիք համայնքի Ալբերտավան և Գաղթականներ թաղամասերի մոտակայքի անհատական շենք-շինություններին, առաջացնելով բնակչության տարհանման անհրաժեշտություն: Հոսող զանգվածի տակ են մնացել խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ՝ նախնական տվյալներով դրանց թիվը հասնում է 14-ի, բնակչության շրջանում տուժողներ դեռևս չկան, չնայած արդեն գործում է խուճապի գործոնը: Մ-2 մայրուղուն սպառնում է լուրջ վտանգ, որը պոչամբարից գտնվում է 150 մետր հեռավորության վրա: **Պոչամբարի պատվարի փլուզման դեպքում ապարախյուսի ծածկման գոտում կարող է հայտնվել** թվով մոտ 800 մարդ:

**I Փուլ -** Մարզի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում: Աղետի գոտու բնակչության տարհանման կազմակերպում:

**Տևողությունը՝**աստղաբաշխական ժամանակով ժ. 09:30-ից -12:00□ 07.06.2016թ.
օպերատիվ ժամանակով 09:30-ից 17:00-ը□ 07.06.2016թ.

**Մասնակի իրավիճակը՝** երկրաշարժի հետևանքով վնասվել է Արծվանիկի պոչամբարի պատվարը: Պատվարի վրա առաջացել է ճեղքվածք 5մ լայնությամբ և 2մ երկարությամբ, որտեղից ապարախյուսը դուրս է հոսում մեծ քանակությամբ:

**Ուսումնական հարցերը՝**

1. Մարզի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում:
2. <<ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան>>-ը գործողության մեջ դնելը: Հետախուզության իրականացում:

3. Հավանական ջրածածկման գոտու բնակչության տարահանման կազմակերպում:

**Ուսուցանվողների գործողությունները՝**

Սյունիքի ՄՓՎ կրտսեր հրահանգիչը ստանալով ահազանգ պոչամբարում շուրջօրյա հերթապահություն իրականացնող անվտանգության աշխատակցից, զեկուցում է ծառայության պետին և կատարում ուսումնավարժության մասնակիցների ազդարարում և հավաք՝ համաձայն ՇՈւ-ի մասնակիցների ցուցակի: Միաժամանակ Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչն իրականացնում է Սյունիքի մարզային փրկարարական վարչության անձնակազմի ազդարարում և հավաք: Ուսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան, ներկայանում են մարզպետարանի վարչական շենք, մասնակցելու խորհրդակցությանը: Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետը մարզպետին զեկուցում է խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին:

Գործողության մեջ է դրվում << ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը>>: Մասնակիցները պարզաբանում են ստեղծված ընդհանուր իրավիճակը և յուրաքանչյուրի խնդիրներն ու անելիքները:

Նշվում են աղետի գոտու սահմանները, Սյունիքի ՄՓՎ փրկարարական ուժերի կազմը, վիճակը և փրկարարական աշխատանքների կատարաման հնարավորությունը և այդ նպատակով մարզի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավվման անհրաժեշտությունը, վթարային գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները, աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները: Մշակվում և ներկայացվում են որոշումների նախագծեր, որոնց իրագործումը հնարավորություն է տալիս անհապաղ կազմակերպել վտանգավոր գոտուց բնակչության տարահանման կազմակերպումը, գյուղացիներին պատկանող նյութական արժեքների գույքի պաշտպանությունը և պահպանությունը: Նշվում են ներգրավված ուժերի համագործակցության կարգը, պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը: ՀՓՋ անձնակազմն իրականացնում է հետախուզություն՝ վթարի իրական վիճակը գնահատելու և անհրաժեշտ փրկարարական և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար: Որոշվում են Ալբերտավան և Գաղթականներ թաղամասերի բնակչության տարհանման երթուղիները: Տարվում են բացատրական աշխատանքներ բնակչության շրջանում խուճապը կանխելու համար:

**Փուլի տևողությունը՝** աստղաբաշխական ժամանակով ժ-ը 13:00-ից-17:30-ը 07.06.2016թ. օպերատիվ ժամանակով՝ 07.06.2016թ. ժ.12:00-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտ:

**Ուսումնական հարցերը՝**

1. Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:
2. Տարհանված բնակչության կենսագործունեության կազմակերպում:
3. Փոխհամագործակցության կազմակերպում:

Ժամը 18:30-ին հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ[illegible] Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. մայիսի 26-ի
N47 Ա որոշման

# ՊԼԱՆ
## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

**Ուսումնավարժության թեման՝** <<Արծվանիկի պոչամբարի պատվարի փլուզման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը>>:

**Ուսումնավարժության նպատակները՝**

1. Ստուգել ՀՀ Սյունիքի մարզի ղեկավար մարմինների պատրաստությունն Արծվանիկի պոչամբարի պատվարի փլուզման դեպքում:
2. Ապահովել բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման գործընթացը:
3. Կատարելագործել ՀՀ Սյունիքի մարզի ղեկավար մարմինների ունակություններն ապարախյուսի ծածկման գոտում բնակչության տարհանման միջոցառումների և փրկարարական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

**Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝** ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի ղեկավար կազմերը, մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, մարզի տարհանման հանձնաժողովը, ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, <<ԶՊՄԿ>> ՓԲԸ, Կապանի <<Բուստ>> ՓԲԸ, Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ, <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, <<ԱրմենՏել>> ՓԲԸ Հարավային տարածքային կենտրոնի Կապանի բաժանմունքը, ՀՀ ԱԻՆ <<Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն>> ՊՈԱԿ, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության Սյունիքի մարզային վարչության և ճանապարհային ոստիկանության համապատասխան ծառայությունները:

**Ուսումնավարժության անցկացման ժամկետը** 2016թ. հունիսի 7-ից 8-ը:

Տևողությունը աստղաբաշխական ժամանակով ժ. 08:30-ից – 18:00, 07.06.2016թ.
օպերատիվ ժամանակով ժ. 09:30-ից 07.06.2016թ. մինչև ժ.09:30–08.06.2016թ.

**Ուսումնավարժության անցկացման վայրը՝** ՀՀ Սյունիքի մարզպետարանի վարչական շենք:

| Ժամկետը | | Ուսումնական հարցեր | Իրավիճակը /միջանկյալների բովանդակությունը/ | Ուսուցանվողների գործողությունները | Ուսումնավարժության ղեկավարի գործողությունները |
|---|---|---|---|---|---|
| Օպ. | Աստղ. | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **I Փուլ-մարզի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում: Ապարախյուսի հավանական ծածկման գոտու բնակչության տարահանման կազմակերպում: Տևողությունը՝** աստղաբաշխական ժամանակով ժ.09:30-12:00, 07.06.2016թ. օպերատիվ ժամանակով–ժ.09:30- 17:00, 07.06.2016թ. | | | | | |
| 07.06<br>09:30<br>09:50 | 07.06<br>07.06<br>09:30<br>09:50 | Մարզի ղեկավար կազմի ազդարարում, և խնդրադրում: | Ս/թ հունիսի 7-ին տեղական ժամանակով ժամը 06:50-ին Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում՝ Ահար քաղաքից 26 կմ դեպի արևմուտք տեղի է ունեցել 6.3 մագնիտուդով երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 7-8 բալ: Ստորգետնյա ցնցումներից վնասվել է Արծվանիկի պոչամբարի պատվարը և առաջացել են ճեղքվածքներ, որոնք ժամ առ ժամ մեծանում են ապարախյուսի ուժեղ հոսքից: Ապարախյուսը պատվարի ճեղքվածքներից դուրս է հոսում րոպեում $850մ^3$ ծավալով: Պոչամբարում կուտակված է մոտ 95,3 մլն $մ^3$ ապարախյուս / առավելագույն ծավալը՝ 96 մլն.$մ^3$/: | Արծվանիկի պոչամբարի անվտանգության աշխատակիցն ահազանգում է Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ և հայտնում, որ տեղի ունեցած երկրաշարժից վնասվել է Արծվանիկի պոչամբարի պատվարը: Ապարախյուսը դուրս է հոսում մեծ արագությամբ: Պոչամբարի ջրի հոսքը կարգավորող պահեստային ելքն ի զորու չէ կանխելու ջրի հսկայական հոսքը: Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը դեպքի մասին զեկուցում է Սյունիքի ՄՓՎ պետին և նրա հրամանով իրականացնում մարզի ղեկավար կազմի ազդարարում: Մասնակիցները ներկայանում են խնդրադրման: | Տալիս է հրահանգ ազդարարում իրականացնելու մասին: Ներկայացնում է ստեղծված իրավիճակը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 07.06<br>09:50<br>17:00 | 07.06<br>09:50<br>10:30 | <<ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը>> գործողության մեջ դնելը:<br><br>Հետախուզության իրականացում: | Առավել վտանգավոր և ջրածածկման գոտում են հայտնվել պոչամբարից ներքև գտնվող Սյունիք գյուղական համայնքի Գաղթական և Ալբերտավան թաղամասերը: | Գործողության մեջ է դրվում <<ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը>>:<br><br>ՀՓՋ-ի անձնակազմը հետախուզություն է իրականցնում վթարի իրական վիճակը գնահատելու և հարկ եղած դեպքում անհրաժեշտ փրկարարական և կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու համար: | Տալիս է կարգադրություն <<ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը>> գործողության մեջ դնելու մասին:<br>Տալիս է կարգադրություն ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին Սյունիք գյուղական համայնքի Գաղթական և Մուաբեր թաղամասերում հետախուզություն իրականացնելու վերաբերյալ: |
| 07.06<br>10:30<br>15:30 | 07.06<br>07.06<br>07.06<br>11:30 | Ապարախյուսի հավանական ծածկման գոտու բնակչության տարհանման կազմակերպում: | Ապարախյուսի ուժեղ հոսքն ողողել է Սյունիք համայնքը, որը մեծ վտանգ կարող է առաջացնել այդ բնակավայրերի կանսապահովման համար: Աղետի գոտում գտնվող բնակչության թիվը կազմում է մոտ 800 մարդ: | Գնահատում են իրավիճակը և առաջարկություններ են ներկայացնում տարհանման վերաբերյալ: Մշակում են ՀՀ Սյունիքի մարզպետի որոշման նախագիծ՝ ջրածածկման տարածքներից բնակչության տարհանման մասին: | Հանձնարարական է տալիս բնակչության տարահանման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | 11:20 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի: | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 12:10 | Տրվում է թիվ 2 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի: | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 14:10 | Տրվում է թիվ 3 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի: | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 07.06<br>11:30<br>12:00 | **Առաջին փուլի ամփոփում** | | Ուսումնավարժության մասնակիցները խորհրդակցության ընթացքում զեկուցում են առաջին փուլում կատարված աշխատանքների մասին: | Ունկնդրում և քննարկում է մասնակիցների զեկույցները և տալիս գնահատական կատարված աշխատանքների մասին: |
| II ՓՈւԼ | | **Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:**<br>**Տարհանված բնակչության կենսագործունեության կազմակերպում**<br>**Փուլի տևողությունը՝** աստղաբաշխական ժամանակով ժ. 13:00-ից-17:30-ը, 07.06.2016թ.<br>օպերատիվ ժամանակով՝ 07.06.2016թ. ժ.12:00-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը: | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 07.06 13:00 մինչև փրկարարական աշխատանքների ավարտ | 07.06 13:00 17:30 | Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում: | Ապարախյուսի ինտենսիվ հոսքը բերել է Ողջի գետի ջրի մակարդակի բարձրացման, որի հետևանքով մարդիկ հայտնվել են շրջափակման մեջ: Գետի ջուրը ցածր պատնեշի հետևանքով դուրս է եկել իր ափերից: | Կազմակերպում և իրականացնում են ջրածածկման գոտում հայտնված մարդկանց և կենդանիների դուրս բերումը: Իրականացնում են ջրամբարի պատվարի ամրացման, պոչամբարի հունի խորացման, մաքրման, ջրի հոսքը ուղորդող և արգելափակող պատնեշների կառուցման, ինչպես նաև բնակելի տներից ջրահեռացման, աշխատանքներ: Կոմունալ էներգետիկ ցանցում իրականացնում են վթարների վերացման աշխատանքներ: Կազմակերպում են տուժածների բուժօգնության գործընթացը: | Հետևում է որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման գործընթացին: |
| | 14:30 | Տրվում է թիվ 4 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 15:40 | Տրվում է թիվ 5 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 16:00 | Տրվում է թիվ 6 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 17:00 | Տրվում է թիվ 7 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի | Վերահսկում է կատարման գործընթացը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 17:00 | Տրվում է թիվ 8 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 16:00 | Տարահանված բնակչության կենսագործունեության կազմակերպում | | Իրականացնում են տարահանված բնակչության ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովումը, ինչպես նաև իրականացնում են հակահամաճարակային, տուժածներին շտապ բուժօգնության ցուցաբերման, հակահրդեհային, հասարակական կարգի պահպանմանն ուղղված միջոցառումներ: | Հետևում է աշխատանքների կազմակերպման գործընթացին: |
| | 17:100 | Տրվում է թիվ 9 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի: | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 17:40 | Տրվում է թիվ 10 միջանկյալը | | Իրականացնում են միջոցառումներ՝ ըստ միջանկյալի: | Վերահսկում է կատարման գործընթացը: |
| | 16:30 | Փոխհամագործակցության կազմակերպում | | | |

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N6
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. մայիսի 26-ի
N47 Ա որոշման

# ՊԼԱՆ
# ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

| Միջանկյալի տրման ժամը | Միջանկյալների բովանդակությունը | Ով է հանձնում | ՈւՄ է հանձնում |
|---|---|---|---|
| I ՓՈւԼ--- Արծվանիկի պոչամբարի պատվարի փլուզման դեպքում Գաղթականներ և Ալբերտավան թաղամասերի բնակչության տարհանման կազմակերպում: Փուլի տևողությունը— աստղաբաշխական ժամանակով-ժ.10:30-ից 13:00-ը, 07.06.2016թ. օպերատիվ ժամանակով-ժ.10:30-ից 17:00-ը, 07.06.2016թ□ | | | |
| ժ. 11:20 | **թիվ 1 միջանկյալ**<br><br>Գաղթականներ և Ալբերտավան թաղամասերում հետախուզություն իրականացնելու ժամանակ խափանվել է <<Գազ 66>> ամենագնաց ավտոմեքենան: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Մ.Պետրոսյան | ժ.11.30<br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ տրանսպորտի ծառայության պետին: |
| ժ. 12:10 | **թիվ 2 միջանկյալ**<br><br>Բնակչության տարհանման ժամանակ Ալբերտավան թաղամասի տներից մեկում տեղի է ունեցել տան սենյակի փլուզում և ընտանիքի անդամներից 3 հոգի ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Գրիգորյան | ժ.13:10<br><br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ ինժեներական ծառայության պետին և բժշկական ծառայության պետին: |
| II ՓՈւԼ-Բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում: Փուլի տևողությունը—աստղաբաշխական ժամանակով ժ.14:00-ից - 17:00-ը, 07.06.2016թ□<br>օպերատիվ ժամանակով ժ.12:00-ից 07.06.2016թ. մինչև փրկարարական աշխատանքների ավարտը: | | | |
| ժ. 14:10 | **թիվ 3 միջանկյալ**<br><br>Փրկարարական | ՀՀ Սյունիքի մարզպետարանի | ժ□15.20<br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ հասարարական |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանքների ժամանակ ապարախույսի ուժեղ հոսքի պատճառով շրջափակման մեջ է հայտնվել Գաղթական թաղամասի 5 բնակիչ: | զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ գլխավոր մասնագետ Մ.Պետրոսյան | կարգի պահպանման ծառայության պետին |
| ժ. 14:30 | **թիվ 4 միջանկյալ**<br><br>Միջպետական նշանակության Մ-2 ճանապարհահատվածի 294կմ հատվածը ծածկվել է ապարախույսով, երկու ավտոմեքենաներ որոնց մեջ կան մարդիկ , չեն կարողանում առաջ շարժվել, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մարդկանց անվտանգ վայրեր տեղափոխելու համար: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Գրիգորյան | ժ. 16:00<br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ տրանսպորտի ծառայության պետին |
| ժ. 15:40 | **թիվ 5 միջանկյալ**<br><br>Ձեռնարկել միջոցներ Արծվանիկի պոչամբարին հարակից վարելահողերի ախտոտվածության և սանիտարական վիճակը հսկողության տակ պահելու ուղղությամբ: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Գրիգորյան | ժ. 16:40<br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ բժշկական ծառայության պետին |

| | | | |
|---|---|---|---|
| ժ:16:00 | **թիվ 6 միջանկյալ**<br><br>Ձեռնարկել համապատասխան միջոցներ Մ-2 Երևան – Մեղրի միջպետական նշանակության մայրուղու 294 կմ-ի և Սյունիք գյուղական համայնքում ապարախյուսից վարելահողերի աղտոտված տարածքների լվացման աշխատանքների կատարման համար: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Մ.Պետրոսյան | ժ. 17:10<br><br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ կոմունալ ծառայության պետին |
| ժ.17.00 | **թիվ 7 միջանկյալ**<br><br>Ձեռնարկել համապատասխան միջոցներ Սյունիք գյուղական համայնքում էլեկտրաէներգիայի վերականգնման աշխատանքների կատարման ուղղությամբ: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Գրիգորյան | ժ.17:50<br><br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետին |
| ժ. 17:00 | **թիվ 8 միջանկյալ**<br><br>Ձեռնարկել համապատասխան միջոցներ ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի Գաղթականներ և Ալբերտավան թաղամասերում համաճարակից խուսափելու համար վիրավոր և անկած կենդանիներին հայտնաբերելու ու վթարային գոտուց դուրս բերելու ուղղությամբ: | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Գրիգորյան | ժ. 17:50<br><br>ՀՀ Սյունիքի մարզի ՔՊ բույսերի և կենդանիների պահպանության ծառայության պետ |

| | | | |
|---|---|---|---|
| ժ.17.10 | **թիվ 9 միջանկյալ**<br>Վթարային տարածքը մաքրելու համար Սյունիք համայնքի ուժերով ընդգրկել լրացուցիչ ուժեր և տեխնիկա : | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Մ.Պետրոսյան | ժ.18.10<br>ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք գյուղական համայնքի ղեկավարին |
| ժ.17.40 | **թիվ 10 միջանկյալ**<br>Կազմակերպել Սյունիք գյուղական համայնքի բնակչության վերադարձը բնակության վայրեր | ՀՀ Սյունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Գրիգորյան | ժ.18.30<br>ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք գյուղական համայնքի ղեկավարին |

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ